

Չինավոր Մեղրյան

*«ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ»
ՊՈԱԿ, իրավաբան-փորձագետ, ԵՊՀ եվրոպական և միջազգային
իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Ապագադրությամբ համատեքստում ինքնորոշման իրավունքի իրացման կենտրոնը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան է: Գլխավոր ասամբլեան, սակայն, իրավասու չէ միջամտելու պետությունների ներքին գործերին, ինչպիսին ՄԱԿ-ի տեսակետից ապագադրությամբ համատեքստից դուրս առաջացած անջատողական շարժումներն են: Մինչդեռ ՄԱԿ-ի կանոնադրությունը չի ստեղծվել նման իրավահարաբերությունների կարգավորման նպատակով. վերջինիս առաջնային նպատակը եղել է միջպետական զինված ընդհարումների կանխարգելումը կոլեկտիվ անվտանգության համակարգի միջոցով¹:

ՄԱԿ-ը կամ, ավելի ճիշտ, Անվտանգության խորհուրդը, իրավասու է մտնելու այդ իրավահարաբերությունների ոլորտ միայն այն դեպքերում, երբ անջատողական շարժումը հանգեցնում է քաղաքացիական պատերազմի և սպառնում վտանգել միջազգային անվտանգությունն ու խաղաղությունը՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին տալով գործելու հնարավորություն Կանոնադրության VII գլխի շրջանակներում:

1990-ական թթ. սկսած՝ ՄԱԿ-ին Անվտանգության խորհուրդը սկսեց տարածել «խաղաղության սպառնալիք» բանաձևը (որը ՄԱԿ-ի միջամտության նախապայման է) նաև ներպետական բնույթի զինված ընդհարումների վրա²: Անվտանգության խորհրդի 713 բանաձևը, որը հանձնարարում էր Հարավսլավիայի ռազմական էմբարգո (շրջափակում) հաճախ հիշատակվում է հեղինակների կողմից որպես անջատման գործըն-

¹ Brierly J.L. The Law of Nations: An Introduction to the International Law of Peace. 6th ed. by Waldock H. Clarendon Press, Oxford, 1963. P. 414:

² Nolte G. Secession and External Intervention // Secession: International Law Perspectives. Ed. by Kohen M. G. Cambridge University Press, Cambridge-New York, 2006. P. 67:

թացին ՄԱԿ-ի միջամտության բեկումնային օրինակ¹, թեև, Անվտանգության խորհուրդը բազմիցս միջամտել է նաև այլ ներպետական վեճերի, երբ վերջիններս պատճառ են դարձել բազմաթիվ մարդկային զոհերի և փախստականների հոսքի:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն գերազանցապես միջամտում է մայր պետության տարածքային ամբողջականությունը պաշտպանելու, այլ ոչ թե անջատողական շարժմանը օժանդակելու գործին: Այս հանգամանքը մի շարք հեղինակների համար պատճառ է դարձել պնդելու, որ ՄԱԿ-ի քաղաքականությունն ապագադրուցաման համատեքստից դուրս առաջին հերթին ուղղված է պետությունների տարածքային ամբողջականության պաշտպանությանը, այլ ոչ թե ինքնորոշման իրավունքի ապահովմանը, և որ անջատողական շարժումներին օժանդակելը ՄԱԿ-ի պրակտիկայում բացառություն է, այլ ոչ համընդհանուր կանոն²:

Այս մոտեցմանը մենք չենք կարող համաձայնել այն պարզ պատճառով, որ վերջինս անտեսում է էական տարբերությունն այն իրավիճակների միջև, որոնք կապված են եղել օտարերկրյա պետությունների միջամտության հետ, և այն իրավիճակների, որոնցում անջատողական շարժումը պայքարում է իր անկախության համար առանց օտարերկրյա միջամտության:

Առաջին դրվագը, որում ՄԱԿ-ը միջամտել է անջատողական շարժման և մայր պետության միջև տեղի ունեցող ընդհարմանը, եղել է Կատանգայի և Կոնգոյի միջև պայքարը: Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության ստեղծումից անմիջապես հետո՝ 1960թ., Կատանգան հռչակեց իր անկախությունը Կոնգոյից՝ մտնելով վերջինիս հետ երկարատև զինված ընդհարման մեջ³: Չինված ընդհարումների առաջին իսկ պահից ընդհուպ մինչև Կատանգայի անջատողական շարժման ոչնչացումը ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ամբողջովին պաշտպանել է

¹ Franck T.M. Fairness in the International Legal and Institutional System: General Course on Public International Law // Collected Courses of The Hague Academy of International Law. Vol. 240 (1993), p. 211:

² Buchheit L.C. Secession – The Legitimacy of Self-Determination. Yale University Press, New Haven, 1978. P. 151:

³ Քննարկվող իրադարձությունների մանրամասն վերլուծության համար տե՛ս Abi-Saab G. The United Nations Operation in the Congo 1960–1964. Oxford University Press, Oxford, 1978:

Կոնգոյին և վերջինիս տարածքային ամբողջականությունը: Սակայն կարևորն այստեղ այն հանգամանքն է, որ Կատանգայի անջատողական շարժումը ֆինանսավորվում էր Բելգիայի կողմից, և վերջինիս զինված ջոկատները կողք կողքի պայքարում էին Կոնգոյի զինված ուժերի դեմ (Բելգիան ուներ արդյունաբերական շահագրգռվածություն, քանի որ Կատանգայի տարածքում գտնվում էին ոսկու և պղնձի հարուստ հանքեր):

Այս հանգամանքը վճռորոշ էր Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերում. այսպես՝ 169 բանաձևը դատապարտեց «անջատողական քայլերը և ռազմական գործողությունները, որոնք իրականացվում են Կատանգային վարչակազմի կողմից արտաքին ֆինանսավորման և օտարերկրյա զինված ջոկատների միջոցով»¹: Կատանգայի անջատողական շարժումն իրականում ոչ թե ինքնորոշման իրավունքի դրսևորում էր, այլ ինքնորոշման իրավունքի ոտնահարում, որով նախկին գաղութատերը՝ Բելգիան, փորձում էր տրոհել ապագաղութացման արդյունքում առաջացած պետության՝ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության (այսինքն՝ ինքնորոշման սուբյեկտի) տարածքային ամբողջականությունը: Հետևաբար ՄԱԿ-ի միջամտությունը Կոնգոյին իրականում կարելի է որակել որպես զինված միջամտություն ի իրականացում ՄԱԿ-ի գաղութային հռչակագրի պահանջների, քանի որ վերջինս բոլոր պետությունների համար սահմանում է պարտավորություն հարգելու «բոլոր ժողովուրդների ինքնիշխան իրավունքները և նրանց տարածքային ամբողջականությունը»:

Նույնը կարելի է ասել նաև անջատողական շարժումների դատապարտման այլ դեպքերի Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության² (ստեղծվել է Թուրքիայի միջամտության շնորհիվ), Ռեպուբլիկա Մրպակայի³ (ստեղծվել էր Սերբիայի միջամտության շնորհիվ) և այլ անջատողական շարժումների մասին, որոնք քննադատվել են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կամ Գլխավոր ասամբլեայի կողմից. բոլորը կայացել են օտարերկրյա ֆինանսական և ռազմական օժանդակության միջոցով՝ իրականում արտահայտելով ոչ թե տեղի բնակչության, այլ միջամտող օտարերկրյա պետության կամքը:

¹ SC resolution 169 (1961). UN Doc. S/5002, 24 November 1961. § 1:

² SC resolution 541 (1983). UN Doc. S/RES/541, 18 November 1983. § 6:

³ SC resolution 787 (1992). UN Doc. S/RES/787, 16 November 1961. § 3:

Այս առումով մարդկության պատմության ընթացքում ինքնորոշման իրավունքի առավել կոպիտ խախտումներից է Կիպրոսի Հանրապետության մասնատումը: Չնայած նրան, որ Կիպրոսը 19-րդ դարի վերջից ըստ էության ոչ ինքնակառավարվող տարածք էր, որը ենթակա էր Բրիտանական վերահսկողությանը, տեղի բնակչությանն այդպես էլ չընձեռնվեց հնարավորություն ազատ հանրաքվեի միջոցով որոշելու սեփական ճակատագիրը: Մեծամասնություն կազմող հույն բնակչությունը բնականաբար կքվեարկեր հոգուտ Հունաստանի հետ միավորման (1959թ. եկեղեցու կողմից կազմակերպված հանրաքվեն չունեցավ իրավական հետևանքներ): Տվյալ հարցը Գլխավոր ասամբլեայի ամբիոն բարձրացնելու բոլոր փորձերը համար պսակվեցին անհաջողությամբ¹: Դրա փոխարեն 1959թ. կնքվեց Լոնդոնի երաշխավորության պայմանագիրը², և 1960թ. օգոստոսի 16-ին ստեղծվեց անկախ Կիպրոսի Հանրապետությունը, ինչը հիմնված չէր Կիպրոսի բնակչության կամքի վրա և, ըստ էության, խախտում էր Կիպրոսի բնակչության ինքնորոշման իրավունքը: Ավելին, Լոնդոնի պայմանագիրը հիմք հանդիսացավ Թուրքիայի կողմից զինված միջամտության համար, որը իբրև թե ուղղված էր Կիպրոսի թուրքական բնակչության իրավունքների պաշտպանությանը, սակայն ըստ էության ևս մեկ անգամ ոտնահարեց Կիպրոսի ժողովրդի ինքնորոշման իրավունքը՝ տրոհելով ինքնորոշման սուբյեկտի տարածքային ամբողջականությունը:

Փաստորեն կրկնակի անգամ ոտնահարվում է Կիպրոսի ժողովրդի ինքնորոշման իրավունքը և պատահական չէ, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կոչ արեց միջազգային հանրությանը չճանաչել Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը:³ Հատկանշական է, որ նման դեպքերում ճանաչման ինստիտուտը կամ, ավելի ճիշտ, «ճանաչման կոլեկտիվ մերժումը» (“collective non-recognition”) ծառայում է որպես ինքնորոշման իրավունքի պաշտպանության ևս մեկ գործիք⁴ և,

¹ Xydis S.G. The UN General Assembly as an Instrument of Greek Policy: Cyprus 1945-58 // Journal of Conflict Resolution, Vol. 12 (1968). P. 142:

² Treaty of Guarantee between the Republic of Cyprus and Greece, the United Kingdom and Turkey, 2 February 1959, հասանելի է http://www.kypros.org/Cyprus_Problem/treaty.html#B կայքում:

³ SC resolution 550. UN Doc. S/RES/550, 11 May 1984. § 2:

⁴ Dugard J. Recognition and the United Nations. Grotius Publications Limited, Cambridge, 1987. P. 108-111:

ինչպես արդեն նշվեց, հանդիսանում է ողջ միջազգային հանրության պարտավորությունը: Սակայն այն դեպքերում, երբ առկա չէ օտարերկրյա միջամտություն Անվտանգության խորհուրդը չի տրամադրում ռազմական օժանդակություն մայր պետությանը և կոչ չի անում միջազգային հանրությանը չհամագործակցել նորաստեղծ սուբյեկտի հետ: Վառ օրինակ է արդեն հիշատակված 713 բանաձևը, որը ընդունվեց Հարավսլավիայի տրոհման համատեքստում և չսատարեց վերջինիս տարածքային ամբողջականությանը, այլ միայն կոչ արեց ձեռնպահ մնալ ցանկացած գործողություններից, որոնք կարող էին բացասական հետևանքներ ունենալ տարածաշրջանում անվտանգության և խաղաղության վրա. սահմանվեց Հարավսլավիայի ռազմական էմբարգո (շրջափակում)¹:

Այսպիսով ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն իրավասու է միջամտելու ինքնորոշման իրավունքի իրականացման դեպքերին: Ավելին, հաշվի առնելով ինքնորոշման իրավունքի *erga omnes* բնույթը, կարելի է ասել, որ Անվտանգության Խորհուրդը պարտավոր է միջամտել: Նման պայմաններում յուրաքանչյուր պետություն, որի տարածքային ինքնիշխանությունը կարող է սահմանափակվել ինքնորոշման իրավունքի իրացման արդյունքում, բնականաբար կպնդի, որ հիմնահարցը ենթակա է իր ներպետական իրավասությանը և հանդիսանում է իր ներքին գործը (այդպես էր օրինակ պնդում Մեծ Բրիտանիան, երբ Կիպրոսի՝ Հունաստանին միանալու հիմնահարցը բարձրացվել էր ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ամբիոն²): Սակայն «ներքին իրավասության» արդարացումը պետության կողմից չի կարող ծառայել որպես անօրինական գործողությունների իրավական հիմնավորում, քանի որ այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը չի կրում բացարձակ բնույթ³:

Այստեղ անհրաժեշտ է պարզաբանել «ներքին իրավասության» հասկացությունը: Միջազգային արդարադատության մշտական պալատը «Քաղաքացիության ղեկրետներ Թունիսում և Մարոկկոյում» գործում նշել է, որ ներքին իրավասությանը ենթակա են այն իրավահարաբերությունները, որոնք «չեն կարգավորվում միջազգային իրավունքով ... և որոնց նկատմամբ պետությունները հանդիսանում են միակ դատավոր-

¹ SC resolution 713 (1991). UN Doc. S/RES/713, 25 September 1991. §§ 6-7:

² Musgrave T. D. Self-Determination and National Minorities. Clarendon Press, Oxford, 1997. P. 223:

³ Տե՛ս Шуршалов В.М. Международные правоотношения. Междунар. Отношения, Москва, 1971. С. 134-135:

ներ», ուստի այն հարցը «թե արդյո՞ք որևէ իրավահարաբերություն ենթակա է բացարձակապես պետության ներքին իրավասությանը, հարաբերական է. այն կախված է միջազգային հարաբերությունների զարգացածության աստիճանից»¹:

Ակնհայտ է սակայն, որ ինքնորոշումը և վերջինիս իրացման հետ կապված հարցերը (մարդու իրավունքներ, տարածքային ամբողջականություն, խաղաղության և անվտանգության պահպանում) բոլորն էլ սերտորեն առնչվում են միջազգային իրավունքի հետ և կարգավորվում են վերջինիս կողմից: Հետևաբար «ներքին իրավասության» շղարշը իրականում չի կարող որպես պատճեն ծառայել ինքնորոշման իրավունքի հետ կապված հարցերը պետության ներքին գործ որակելու համար: Հետևաբար ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի միջամտության պարտավորությունն առավել քան ակնհայտ է:

Անվտանգության խորհրդի պրակտիկայի համատեքստում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ վերջինիս դերակատարությանը նաև ԼՂՀ հիմնահարցի կարգավորման համատեքստում: Չնայած աղբյուրային կողմի պարբերական հայտարարություններին, թե Անվտանգության խորհուրդը ճանաչել է Հայաստանի Հանրապետությանը որպես օկուպացիոն ուժ՝ ԱԽ բանաձևերը (բանաձևեր 822, 853, 874, 884) իրականում ունեն Հայաստանի և ԼՂՀ-ի համար բարենպաստ դիրքորոշում, քանի որ, ԼՂՀ-ն ըստ էության, չեն ճանաչում որպես Հայաստանի կամքով և միջոցներով գործող սուբյեկտ, որի գործողությունները վերագրելի են Հայաստանին, ինչն ipso facto անօրինական կդարձնեն ԼՂՀ ստեղծումը:

Տվյալ բանաձևերն իհարկե նվիրված են նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի տարածքից դուրս գտնվող շրջաններում ռազմական գործողությունների դատապարտմանը, սակայն ըստ էության ճանաչում են ԼՂՀ ինքնուրույն իրավասուբյեկտությունը:

Այսպես՝ Անվտանգության խորհրդի բանաձևերից առաջինը՝ 822 բանաձևը, խոսում է «տեղական հայկական ուժերի կողմից Քելբաջարի շրջանի նվաճման» մասին²: Հայաստանի Հանրապետության և տեղական հայկական ուժերի միջև տարբերությունն ընդգծված է նաև Անվտանգության խորհրդի նախագահի հուշագրում, որին վերոնշյալ բա-

¹ Nationality Decrees in Tunis and Morocco, PCIJ Series B (1923), No. 4, P. 24:

² SC resolution 822 (1993). UN Doc. S/RES/822, 30 April 1993, preamble:

նաձևը հղում է անում իր պրեամբուլայում¹: ՄԱԿ-ում Ֆրանսիայի ներկայացուցչի՝ բանաձևի ընդունմանը հաջորդած եզրափակիչ ճառում նույնպես վերահաստատվում է այս տարբերակումը²: Ֆրանսիայի ներկայացուցիչը, խոսելով ԱԽ բանաձևի հիմքում ընկած սկզբունքների մասին, նշեց, որ բանաձևի պրեամբուլան արտացոլում էր երկու կարևոր հանգամանք՝ 1) առկա էր լարվածություն Հայաստանի և Ադրբեջանի միջև, 2) չնայած դրան՝ միևնույնն է, զինված ընդհարումը կրում էր տեղայնացված բնույթ: Ուստի, ըստ ֆրանսիական ներկայացուցչի խոսքերի, պետք էր անել ամեն ինչ, որպեսզի ընդհարումը չվերածվեր միջպետական ընդհարման Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև:

853 բանաձևը Հայաստանի Հանրապետությանը կոչ արեց «շարունակել գործադրել իր ազդեցությունը Լեռնային Ղարաբաղի հայերի նկատմամբ՝ 822 բանաձևի և սույն բանաձևի պահանջներն ի կատար ածելու համար և հասնելու այդ կողմի կողմից ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկների ընդունմանը»³: Սույն ձևակերպումը կարելի է մեկնաբանել միայն հետևյալ կերպ՝ 1. Լեռնային Ղարաբաղը իրավահարաբերությունների «կողմ» է, այսինքն՝ օժտված է ինքնուրույն իրավասուբյեկտությամբ, 2. Հայաստանն ունի ազդեցություն ԼՂՀ նկատմամբ (սակայն ԼՂՀ-ն նույնական չէ Հայաստանի հետ), 3. Հայաստանը փորձել է գործադրել իր ազդեցությունը անցյալում ԵԱՀԿ սկզբունքները ԼՂՀ-ին պարտադրելու համար (քանի որ ԱԽ-ն կոչ էր անում «շարունակել գործադրել իր ազդեցությունը») 4. Հայաստանը արդյունքի չի հասել (ինչն ավելի է ընդգծում երկու սուբյեկտների՝ միասնական կամքով չառաջնորդվելու հանգամանքը):

Նույն շարադրանքն են օգտագործում նաև ԵԱՀԿ և այլ միջազգային կազմակերպությունների փաստաթղթերը: Այսպես Եվրոպական ընկերակցությունները 1993թ. ապրիլի 7-ի հայտարարությունում նշեցին, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների վատթարացումն անմիջական հետևանք է Լեռնային Ղարաբաղում զինված ընդհարման, սակայն չի հիշատակում ՀՀ-ն որպես զինված ընդհարման կողմ⁴: Ավել-

¹ Note by the President of the Security Council, UN Doc. S/25539, 6 April 1993):

² Provisional Verbatim Record of the Three Thousand Two Hundred and Fifth Meeting of the Security Council, UN Doc. S/PV.3205 (30 April 1993), p.11:

³ SC resolution 853. UN Doc. S/RES/853, 29 July 1993. § 8.

⁴ UN Doc. S/25564, 7 April 1993. P. 2:

լին՝ Եվրոպական ընկերակցությունները նույնպես կոչ արեցին ՀՀ կառավարությանը գործադրել իրենց ազդեցությունը՝ հորդորելով դադարեցնել Լեռնային Ղարաբաղի ուժերի վրա հակամարտությունը¹:

Ընդհանրացնելով այս ամենը՝ գալիս ենք այն եզրակացության, որ վերոնշյալ բանաձևերից և փաստաթղթերից ոչ մեկը չի խոսում ԼՂՀ անկախության հռչակագրի անիրավաչափության մասին, կոչ չի անում միջազգային հանրությանը չճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, ավելին, այդ բանաձևերն ընդունում են Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ («տեղական հայկական ուժեր»)՝ միմյանցից տարբերվող իրավասություններով: Բանաձևերում օգտագործվող «օկուպացիա» եզրույթը վերաբերում է միայն ԼՂՀ հարակից տարածքներին, և որպես «օկուպացնող» սուբյեկտ՝ հիշատակում են տեղական հայկական ուժերը. ոչ մի բանաձև չի հիշատակում Հայաստանը որպես օկուպացիոն ուժ:

Վերոնշյալ բանաձևերը, իհարկե, խոսում են նաև տարածաշրջանի բոլոր պետությունների տարածքային ամբողջականությունը հարգելու անհրաժեշտության մասին, սակայն հաշվի առնելով տարածքային ամբողջականության սկզբունքի վերաբերյալ նախորդ գլուխներում մեր կողմից ներկայացված վերլուծությունը, պարզ է դառնում, որ քննարկվող բանաձևերն իրականում պարզապես կոչ են անում մասնակից պետությունների գերծ մնալ միմյանց դեմ ուժ գործադրելուց:

Բոլոր այս բանաձևերը իհարկե, խոսում են նաև տեղական հայկական զինված ուժերը ետ քաշելու պարտավորության մասին: Այս հանգամանքը ևս ունի իր դրական կողմը, քանի որ ըստ էության ընդունում է որոշակի տարածքների (որոնցից վերջիններս պետք է հետ քաշվեն) տեղական հայկական ուժերի վերահսկողության տակ լինելու և նրանց օրինականորեն պատկանելու հանգամանքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է փաստել, որ թեև ՄԱԿ-ը և այլ միջազգային կազմակերպություններ չեն ճանաչել ԼՂՀ անկախ պետականությունը, այնուամենայնիվ, ի տարբերություն նոր պետությունների ստեղծման այլ դեպքերի, ընդունել են անկողմնակալ ձևակերպումներ, որոնք առաջին հերթին ուղղված են եղել տարածաշրջանում խաղաղության ապահովմանը, այլ ոչ թե այս կամ այն սուբյեկտի գոյության իրավունքի հերքմանը կամ այս կամ այն պետության սահմանների

¹ Ibid:

անփոփոխելիության ճանաչմանը: Այս առումով ԼՂՀ վերաբերյալ ընդունված բանաձևերը կարելի է համեմատել Հարավսլավիայի համատեքստում ընդունված 713-րդ բանաձևի հետ, որը նույնպես չէր ճանաչում Հարավսլավիայի տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև այս կամ այն սուբյեկտի ստեղծման օրինականությունը, այլ միայն նպատակամղված է տարածաշրջանում խաղաղության ապահովմանը:

Այս նմանությունը թերևս կարող է պայմանավորված լինել նրանով, որ, ինչպես և Հարավսլավիայի տրոհման պարագայում առաջացած պետությունները, ԼՂՀ-ն նույնպես առաջացել է ԽՍՀՄ-ի տրոհման արդյունքում և չի հանդիսանում անջատողական շարժում, որն ուղղված է Ադրբեյջանի տարածքային ամբողջականության դեմ և ոչ էլ հանդիսանում է օտարերկրյա կամքով ստեղծված «խաղալիք պետություն» (“puppet state”), որի առաջնային նպատակը նախկին սուվերենին վնասելն է, և որի գործողությունները վերագրելի են այդ օտար երկրին (ինչպես օրինակ՝ Կատանգայի, Ռեպուբլիկա Սրաբսկայի կամ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության պարագայում):

Միջազգային հանրության կողմից ինքնորոշման իրավունքի իրացումն ապահովելու այլ եղանակ են պետությունների միակողմանի գործողությունը: Ինքնորոշման իրավունքի ոլորտում երրորդ պետությունների կողմից միակողմ գործողությունները, սակայն, պետք է կրեն սահմանափակ բնույթ:

Հատկանշական է, որ եթե անջատողական շարժումն իրականում չհանդիսանա ինքնորոշման սուբյեկտ, երրորդ պետության կողմից յուրաքանչյուր օժանդակություն կորակվի որպես միջամտություն մայր պետության ներքին գործերին և միջազգային իրավունքի խախտում (նույնը վերաբերում է նաև անջատողական սուբյեկտի ճանաչման)¹:

Այսպես, «Նիկարագուայում և նրա դեմ ռազմական և ռազմականացված գործողությունների վերաբերյալ» վճռում Միջազգային դատարանը նշեց, որ «... դժվար է պատկերացնել, թե ինչ կմնար միջազգային իրավունքում [այլ պետությունների ներքին գործերին] չմիջամտելու պարտավորությունից, որն արդեն իսկ թույլատրելի է, եթե իրականաց-

¹ ՄԸ.: Dugard J. & Raič D. The Role of Recognition in the Law and Practice of Secession // Secession: International Law Perspectives. Ed. by Kohen M. G. Cambridge University Press, Cambridge-New York, 2006. P. 109:

վում է պետության կառավարության հայցով, եթե նման միջամտություն թույլատրելի լիներ նաև ընդդիմության խնդրանքով»¹:

Սա տրամաբանական է, քանի որ եթե անջատողական շարժումը չի հանդիսանում ինքնորոշման սուբյեկտ՝ ժողովուրդ, ապա վերջինիս անջատումը առաջ է բերում միջազգային-իրավական հետևանքներ միայն փաստի ուժով, այն պահից, երբ այն փաստացի ապահովում է իր անկախությունը մայր պետությունից՝ հանդիսանալով *fait accompli*: Նախքան այդ պահը ցանկացած միջամտություն, լինի այն զինված օգնություն, նյութական օժանդակություն, թե անջատված սուբյեկտի պետականության ճանաչում, կհանդիսանա միջամտություն մայր պետության ներքին գործերին և վերջինիս իրավունքների ոտնահարում²:

Իրավիճակը լիովին այլ է, երբ անջատման դիմած սուբյեկտը հանդիսանում է ինքնորոշման իրավունքի կրող՝ ժողովուրդ: Այս պարագայում, ինչպես արդեն նշվեց, անջատման և նոր պետականության ստեղծման հիմնահարցը կարգավորվում է միջազգային իրավունքի կողմից և չի հանդիսանում մայր պետության ներքին գործը: Այդ մասին է վկայում նաև պետական պրակտիկան: Այսպես, Ալժիրի պետականությունը ճանաչվել էր շուրջ երեսուն պետությունների կողմից նախքան մայր պետության՝ Ֆրանսիայի 1962թ. հուլիսի 3-ի ճանաչումը³:

Սակայն անգամ այս պարագայում երրորդ պետությունների կողմից օժանդակությունը պետք է կրի սահմանափակ բնույթ: Այսպես, ժողովրդի գործողությունների անմիջական վերահսկողությունը երրորդ պետության կողմից կարող է վերածել այդ ժողովուրդը «խաղալիք պետության» կամ վերահսկվող սուբյեկտի, որի գործողությունները վերագրելի կլինեն արդեն վերջինիս «օժանդակող» պետությանը: Այս պարագայում արդեն բնականաբար կխախտվի միջպետական հարաբերություններում ուժի գործադրման արգելքը, քանի որ նման «օժանդակության» իրական պատճառը կլինի ոչ թե համապատասխան ժողովրդի ինքնորոշման իրավունքի արդյունավետ իրացումը, այլ մայր պետության տրոհումը, իսկ ժողովրդի՝ այլ պարագայում միջազգային-իրավական առումով չեզոք

¹ Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v. USA), ICJ Reports 14 (1986), P. 126, § 246:

² Crawford J. Creation of States in International Law. 2nd ed., Clarendon Press, Oxford 2006. P. 389:

³ Ibid. P. 385:

գործողությունները, վերագրվելով «օժանդակող» պետության, կդառնան հակահրավակական:

Ինչ վերաբերում է մարդասիրական ինտերվենցիայի (միջամտության) իրավաչափությանը անհրաժեշտ է նշել, որ անգամ եթե նման միջամտությունը երրորդ պետության կողմից միջազգային իրավունքում անօրինական լինի, այն ipso facto չի անօրինականացնի անջատողական շարժումը, եթե իրացվում է ինքնորոշման սուբյեկտի կողմից, քանի որ ինքնորոշման իրավունքը կախված չէ երրորդ պետությունների գործողություններից, և վերջիններիս անօրինական քայլերը չեն կարող գրկել ժողովրդին իմպերատիվ բովանդակություն ունեցող իրավունքից: Այդ մասին է ակնհայտորեն վկայում, օրինակ, Հնդկաստանի ռազմական օժանդակությունը Բանգլադեշին: Անգամ եթե Հնդկաստանի զինված գործողությունները Պակիստանի դեմ համահունչ չէին միջազգային իրավունքի պահանջներին, միևնույնն է այն չխոչընդոտեց Բանգլադեշի միջազգային ճանաչմանը և վերջինիս անդամակցությանը¹:

Zinavor Meghryan

*“Law Institute of the Ministry of Justice of the RA” SNCO, Legal expert,
PhD student at the Chair of European and International Law, YSU*

PROBLEMS OF OUT-OF-COURT PROTECTION OF THE RIGHT FOR SELF-DETERMINATION

The article discusses international legal problems of implementation of the right to self-determination, particularly the use of non-judicial means of its protection. Author analyzes the role of United Nations and its bodies in the process of decolonization and in cases of non-colonial self-determination, including relevant case-law of ICJ. Author comes to the conclusion that customary international law, as it stands today, recognizes the right of ethnic groups to self-determination in cases where that have been subjected to grave human rights violations by the parent state.

¹ St’u Richard S. Leo R. War and Secession: Pakistan, India, and the Creation of Bangladesh, University of California Press, Los Angeles, 1990. P. 162: